


Փորձանքաւոր մարդուն օգնութեան հասիր՝ որ չըբայ թէ ի սպառ կործանի, յաղթութեան պարծանաց եւ աւարին կէսն յետոյ քեղի կ'իջնայ:

Հ. Ռ. Պ.

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՊԵՏՐՈՍ ԳՈՒՐԵԱՆԻ ԾԻՐԻՄԸ

Երբ Տիգրան Արփիարեան, իւր Մասիին մէջ այս տարի, Պետրոս Գուրեանի մահուան 28^{րդ} տարեդարձը յիշատակելով, այդ վաղամեռ բանասերը անգամ մը եւս կը կենդանացընէ մեր ամենուս սրտին մէջ, այդու քաղցր պատականութիւն մը յիս կը վառէ, ներկայացընելու անոր ցուրտ շիրիմը, զոր շատոնց լուսանկարել տուած եմ, եւ զոր պիտի հրատարակէի Գուրեանի մահուան 25ամեակին, եթէ՛ այդ առթիւ կատարելի դրական հանգէսը չարգիլուէր այն ատեն տխուր պատահարներով:



ՊԵՏՐՈՍ ԳՈՒՐԵԱՆԻ ԾԻՐԻՄԸ

Երախտագիտական հաւաստիք մըն է, զոր կ'ուզեմ յայտնել այսօր Պետրոս Գուրեանի անմահ յիշատակին, այդ աննման քերթողին, զոր շատ լաւ ճանչցած եմ եւ մանկութեանս, եւ որ եղաւ իմ առաջին վարժապետս, իմ առաջին վարժապետս այն, դաս մ'իսկ տուած չէ նա ինձ, բայց իւր մահուանէն յետոյ իւր հեշտաբուր քնարովը, ինքը նախ պատճառ եղած է ինձ, որ կենանքիս մէջ ունեցած եմ երբեմն բանաստեղծութիւններ կարդալու, բանաստեղծութիւններ գրելու բուռն տենչ մը:

Պետրոս Գուրեան, իւր շիրիմը կանգնած է ինքն իսկ, իւր գրչովը, զոր 1872ին անմահացուց իւսկիւտարի ընթերցասիրացընկերութիւնը, հրատարակելով անոր Տաղերն ու Թարգերգերնէնէրը: Գուրեանի գործոց հրատարակութեան արգիւնքովն է, որ շինուած է անոր շիրիմը, զոր կը տեսնենք հոս:

Գրեթէ երկուք ու կէս մէտր բարձրութիւն ունի այն, եւ է համակ կճեայ. կանգնած է իւսկիւտարի Ազգ. գերեզմանատան մէջ, Պաղար Պաշի մեծ պողոտային ճիշտ վրան, այնպէս որ ամէն անցորդ կը տեսնէ զայն դրսէն եւ կանգ կ'առնու անոր վերտառութիւնը կարդալու: Մարմարեայ փառաւոր պատուանդանի մը վրայ կը բարձրանայ այն, բաղկացեալ երկու կտորէ. առաջին մասը՝ մէկ մէտր եւ քիչ աւելի, իւր վրան կը կրէ բուն շիրիմը չորս քարգնտակ ոտքերով:

Մէկ մէտր բարձրութեան հազիւ կը հասնի այս երկրորդը, որ քառակուսի՝ կը վերջանայ բրգաձեւ, ունենալով չորս երես, որուն արեւելեանը կը կրէ հետեւեալ Տապանագիրը.

ՊԵՏՐՈՍ ԳՈՒՐԵԱՆԻ ԿԵՂԵՆ

Աստ հանգչի մարմին Պետրոսի Գուրեան, Որ քրսանամեայ էջ ի գերեզման. Երկաթագործի սա ծընաւ որդի, Բանաստեղծ թըռեաւ ի կենաց աստի: Ի տարժամու Յունվար քրսանի չազար ու թ հարիւր եօթանասներկի.